ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 426-Ա

20 հուլիսի 2026 թ.

ԱԼԲԵՐՏ ԱՂԵԿՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 161-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Ալբերտ Աղեկյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Ալբերտ Աղեկյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդը՝ 2026 թվականի օգոստոսի 3-ից 2026 թվականի սեպտեմբերի 3-ը ներառյալ (24 աշխատանքային օր):

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառույթները:

3. Ալբերտ Աղեկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի սեպտեմբերի 4-ից:

20.07.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405031

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ